ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.15-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Ս/թ հունիսի 2-ին մարզի Նորակերտ, Արփունք, Կուտական, Մեծ Մասրիկ, Կախակն և Ծովակ գյուղական համայնքներում տեղած կարկուտի և ուժեղ քամիների հետևանքով գյուղատնտեսական մշակաբույսերին հասցված վնասների չափերը ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գրիգորյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ, նախագահ

Ջրաղացպանյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Իսոյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Բաղեյան Ռ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ

1. Հանձնաժողովին՝ 5-օրյա ժամկետում ուսումնասիրության արդյունքները ներկայացնել մարզպետարան:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ